ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրության նախագծով (այսուհետ՝ նախագիծ) կարգավորումները վերաբերում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի 32-րդ հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 53-րդ կետին:

Հավելվածի 53-րդ կետը վերաբերում է բացառապես Ռուսաստանի Դաշնության օրենսդրության կիրառությանը, մասնավորապես՝ Հանձնաժողովի և Միության դատարանի պաշտոններից ազատված՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող պաշտոնատար անձանց և աշխատողների (այսուհետ՝ աշխատակիցներ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքին:

Հավելվածի 53-րդ կետով աշխատակիցների համար սահմանված են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող հետևյալ պայմանները՝

1. մինչև Հանձնաժողովի և Միության դատարանի կազմում աշխատելը զբաղեցրել են դաշնային պետական (պետական քաղաքացիական) ծառայության պաշտոններ,
2. ունեն պետական քաղաքացիական ծառայության առնվազն 15 տարվա ստաժ,
3. ազատվել են Հանձնաժողովի և Միության դատարանի կազմում իրենց զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ՝ իրենց մեղքով աշխատանքից ազատվելու դեպքերի),
4. աշխատանքից ազատվելուց անմիջապես առաջ նրանք առնվազն 12 ամիս պաշտոն են զբաղեցրել Հանձնաժողովում կամ Միության դատարանում:

«Առանձին կատեգորիաների անձանց կենսաթոշակային տարիքը բարձրացնելուն առնչվող՝ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություն կատարելու մասին» Ռուսաստանի Դաշնության 23.05.2016 թ. ՓՁ-143 օրենքով (ուժի մեջ է մտել 01.01.2017 թ.) երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող 15 տարվա պետական քաղաքացիական ծառայության ստաժի պահանջը փոխվել է՝ այն սահմանելով 20 տարի (բարձրանալու է աստիճանական՝ յուրաքանչյուր տարի ավելանալու է կես տարով):

Այս օրենսդրական փոփոխությանը համապատասխան՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել նաև Հավելվածի 53-րդ կետում:

Միաժամանակ, Արձանագրությամբ կարգավորվում են դաշնային պետական ծառայության պաշտոններ զբաղեցրած աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի իրացմանն առնչվող հարաբերությունները:

Այսպես, եթե Հավելվածի 53-րդ հոդվածով սահմանվում է միայն դաշնային պետական քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցրած աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը, ապա Արձանագրության համաձայն՝ խնդրո առարկա հոդվածը կվերաբերի նաև պետական ծառայության համակարգի պաշտոններ զբաղեցրած բոլոր աշխատողներին:

Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության պետական ծառայության համակարգը եռաստիճան է և բաղկացած է պետական քաղաքացիական ծառայությունից, զինվորական ծառայությունից և այլ տեսակի պետական ծառայությունից:

Սա նշանակում է, որ Հավելվածի 53-րդ հոդվածի գործող կարգավորումների համաձայն՝ օրինակ այլ տեսակի պետական ծառայության՝ մաքսային, հարկային պաշտոն զբաղեցրած Ռուսաստանի Դաշնության քաղաքացին Հանձնաժողովի և Միության դատարանի կազմում պաշտոն զբաղեցնելու դեպքում ձեռք չի բերում երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք: Արձանագրությամբ կարգավորվում են նաև նրանց՝ նշված կենսաթոշակի իրավունքի իրացմանն առնչվող հարաբերությունները:

Այսպիսով, Արձանագրության համաձայն՝ մինչև Արձանագրությունն ուժի մեջ մտնելը Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերած աշխատակիցները կպահպանեն այդ իրավունքը, իսկ մյուս աշխատակիցները երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք կբերեն, եթե՝

1) ազատվել են Հանձնաժողովում կամ Միության դատարանում զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ՝ իրենց մեղքով աշխատանքից ազատվելու դեպքերի),

2) ազատվելու օրվա դրությամբ ունեն Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ դաշնային պետական քաղաքացիական ծառայության ստաժ: Ընդ որում, պետական քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է պետական քաղաքացիական ծառայության, զինվորական ծառայության և այլ տեսակի պետական ծառայության պաշտոններում, ինչպես նաև Հանձնաժողովի կամ Միության դատարանի կազմում պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածները,

3) աշխատանքից ազատվելուց անմիջապես առաջ նրանք առնվազն 12 ամիս պաշտոն են զբաղեցրել Հանձնաժողովում կամ Միության դատարանում:

Ելնելով վերոգրյալից՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նպատակահարմար է գտնում նշյալ Արձանագրության հաստատումը:

Արձանագրության կատարման համար պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ն.ՄԿՐՏՉՅԱՆ